555.42
Ч-63

Ս. Ս. Մ. Հ. Ս. Խ. Հ.
№ 4 Դրոշեաարցեր բոլոր լեզուների, միացե՛ք. № 4

Լ. Ա. ԿՈՉԼՈՎՍԿԻ

ՔՈՂԱՐԿՈՒՄ

I ՄԱՍ

ԲՆԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ

(Ամեն մի հետեվակի, հեծելակի յեվ հրետավորի համար կարեվոր տեղեկություններ)

ԹԱՐԳՄ. Հ. ԱԼԵՔՅԱՆ

Կ. Կ. Բ. Ռ.-Հ. Խ.-ին կից
Հայկական Խմբագր.-Հրատարակչական Կոլեգիա

ՅԵՐԵՎԱՆ, 1924

Ս. Խ. Հ. Մ. Հ. Ս. Խ. Հ.
№ 4 Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք. № 4
300
1409-40
1003
11988

Լ. Ա. ԿՈՋԼՈՎՍԿԻ

ՔՈՂԱՐԿՈՒՄ

I ՄԱՍ

ԲՆԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ

(Ամեն մի հետեվակի, հեծելակի յեվ հրետավորի համար կարեվոր տեղեկություններ)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
Именная, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԱՐԳՄ. Հ. ԱԼԵՔՍԱՆ

Կ. Կ. Բ. Ռ.-Հ. Խ.-ի Կից
Հայկական Խմբագր.-Հրատարակչական Կոլեգիա

ՅԵՐԵՎԱՆ, 1924

41.770

22 MAY 2013

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

3412

ՅԱՆԿ

ԵՋ

ՀԵՂԻՆԱԿԻՑ 5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7
ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 8
ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ 10
ԲՈՂԱՐԿՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 12
ՄԱՐԴՈՒ ԲՈՂԱՐԿՈՒՄԸ 13
ԿԵՆԴԱՆԻ ՈՒԺԻ ԲՆԱԿԱՆ ԲՈՂԱՐԿՈՒՄԸ . 21
ԶՈՐԱՇԱՐԺ 21
ՄԻՄԻԿՐԻԱ 22
ՏԵՂԱՆՔԻՆ ՀԱՐՄԱՐՎԵԼԸ 25
ա. Ռելյեֆա—պաշտպանական հատկություններ 26
բ. Գունա-պաշտպանական հատկություններ 28
գ. Սովերա-պաշտպանական հատկություններ 29

դ. Տեսարանա-պաշտպանական հատկություններ 32
յե. Որվա ժամանակից, արեվի ու յեղանակի դրությունից կախում ունեցող-պաշտպանական հատկություններ 33
ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ 33
ՏԵՂԱՆՔԻ ՌԵԼՅԵՖԱ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 34
ՏԵՂԱՆՔԻ ԳՈՒՆԱ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 38
ՏԵՂԱՆՔԻ ՏԵՍԱՐԱՆԱ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 39
ՔՈՂԱՐԿՈՒՄԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ 42
ՔՈՂԱՐԿՈՒՄԻ ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ . . . 44
ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ ՊԱՀՊԱՆԵԼԸ . . 45

ՀԵՂԻՆԱԿԻՑ

Ապագա պատերազմում այնքան կարևոր տեղ բռնող քողարկման գործը ուսումնասիրելու համար կազմված այս ձեռնարկի պատճառը յեղել է. մի կողմից Անդրկովկասի կենտրոնից հեռու լինելը, վորով նոր. գիտական գրքեր շատ քիչ են հասնում մեզ, մյուս կողմից՝ այն, վոր մեր ունեցած գրքերի և ամսագրերի մեջ տեղեկությունները այնքան կցկտուր ու ցրիվ են, վոր շատ քչերին կհաջողվի մի ճյուղի գիտելիքները համախմբել։ Բացի դրանից, թեև Ռազմավարժական հիմնարկների գլխավոր վարչությունը զինվորական դպրոցների համար քողարկումի դասընթացի նոր ծրագիր է ուղարկել, բայց չկան այնպիսի ձեռնարկներ, վոր ամբողջությամբ ծրագրին բավարարություն տան։ Իսկ լաբարատորիական մեթոդը, քողարկության վերաբերյալ գրքեր չլինելու պատճառով, կուրսանտներին հնարավորություն չի տալիս ինքնուրույն կերպով աշխատելու։

Ներկա ձեռնարկը կազմելիս, իբրև գլխավոր աղբյուր ծառայել է Գ. Գ. Նեվսկու խմբագրությամբ և Լ. Ա. Սկլյարի ու Դ. Ա. Յեվդոկիմովի կազմած քողարկության մասին նյութերի ժողովածուն։

Ներկա ձեռնարկը հրատարակվում է յերեք սառանձին-առանձին մասերով, ջոկ պրակներով, նպատակ ունենալով քողարկության վերաբերյալ տեղեկությունները բաժանել հետևյալ մասերին։

1. Տեղեկություններ, վորոնք անհրաժեշտ են ամեն մի հետևակի, հեծելակի և հրետավորի համար։

2. Տեղեկություններ, վորոնք պարտադիր են Ռազմա-վարժական հիմնարկների դասընթացքը անցնելու համար, նույնպես և հրամկազմի և այն մարդկանց համար, ովքեր կարող են կազմել իրանց զորամասի քողարկման խումբը։

3. Տեղեկություններ, քողարկումի ավելի բարդ ձևերի մասին, վորոնց հրահանգիչները կարող են լինել մասնագիտական պատրաստականություն ունեցող և քողարկման բարձր դպրոցներ ավարտած մարդիկ։

Լ. Կոզլովսկի

I ՄԱՍ

ԲՆԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ

(Ամեն մի հետեվակի, հեծելակի յեվ հրետավորի համար կարեվոր տեղեկություններ)։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

Հարվածելու տեխնիկայի ինչպես և վերերկրյա (յերկրի վրայի) ու ոդային հետախուզության ժամանակակից հսկայական զարգացման միջոցին, քողարկումը առաջնակարգ տեղ է բռնել կռվի միջոցների շարքում։ Դա հարկավոր է վոչ միայն յերթի ժամանակ, մարտական գործողության համար պատրաստվելու, ու հենց իսկական մարտում, այլև խորը թիկունքում. ինչպես օրինակ. բանակի համար մարտական և պարենի պաշարները բեռնավորելու և բեռնաթափելու պունկտերում, ղորքը վագոն նստեցնելու և իջեցնելու տեղերում, մարտական ու պարենի կենտրոնական պահեստների տեղերում և այլն։

Քաղաքկումի այն միջոցները, որոնք չեն պահանջում առանձնապես լայն գիտելիքներ և քաղաքումի համար հատուկ նյութեր, պետք է ծանոթ լինեն ոչ միայն սոսկ մարտիկներին, այլև բոլոր նրանց, ովքեր առնչություն ունեն ռազմական կարգադրությունների և գործողությունների հետ։

ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մի համառոտ ակնարկ ձգենք ժամանակակից տեխնիկայի ավելի քան աչքի ընկնող աջողությունների վրա, որոնք վերաբերում են կապին, դիտողությանը և հարվածելուն։

ԿԱՊԸ.—Հակառակորդի մերձեցման վոլորտում, նմանապես և մարտի ժամանակ, բացի կապի սովորական միջոցներից, ներկայումս ռազմական գործողությունների թատերաբեմում պետք է ի նկատի ունենալ, ռադիո-հեռագրի և ռադիո-հեռախոսի զարգացման հսկայական աջողությունը։ Ռադիոն իր ցանցով պատել է համարյա ամբողջ յերկրագունդը։ Այժմ կարելի յե հեռագրել և ռադիո-հեռախոսով լսել ա-

վելի քան 20,000 վերստ տարածության վրա։ Ռադիո-ալիքները կարելի յե ուղղել դեպի ամեն մի ցանկացած վորոշ կետ. իսկ ռադիո-կողմնացույց կայանների ոգնությամբ կարելի յե իմանալ թե նրանք վոր վորոշ կետից են ուղղված։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր հետախուզության համար շատ կարևոր է իմանալ, թե վոր տեղ է գտնվում թշնամու կայանը։

Ամերիկայում, Ատլանտյան ովկիանոսի ափում շինված է մինչև 30 հատ այդպիսի ռադիո-կողմնացույց կայաններ, նրանց գործը նավերին ծառայելն է այն դեպքերում, յերբ որինակի համար, վերջիններս չեն կարողանում ովկիանոսում մառախուղի ժամանակ վորոշել իրանց կեցած տեղը։ 1920 թվին այդպիսի կայանների ծառայությունից ոգտվել են մինչև 16,000 նավ։ Այժմ նավի համար սարսափելի չե ծովում «ճանապարհ կորցնելը», բավական է հեռագրել մոտակա ռադիո-կողմնացույց կայանը և հարցնել, «յես վորտեղ եմ գտնվում», վոր մոտավորապես 5 բոպեյից հետո, նրան ճիշտ ցույց տրվի նրա գտնված տեղը։

Ֆրանսիական գեներալ Ֆերրիեյի առելով դեպք է յեղել, վոր սավառնակից աջողվել է Տուլոնում ղեկավարել ծովային ջոկատը 6 կիլոմետր (5 վերստ 314 սաժ.) հեռավորությունից։ Ռադիոյի միջոցով կարելի յե մեխանիզմներ ղեկավարել։ Այժմ դժվարություն չի ներկայանում ղեկավարել գետնի վրայից առանց սավառնորդի սավառնակը կամ առանց մարդկանց տանկը։ Ամերիկական Անդր-Ատլանտյան «Լեվիաթան» նավի վրա 740 ռադիո-հեռախոսի ապարատներ են կառուցված. ճանապարհորդության ժամանակ ամեն ուղևոր կարող է խոսել իր ազգականների հետ, վորոնք ցամաքի վրա յեն գրանվում և այլն։

ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բացի վերերկրյա կատարվող դիտողության միջոցներից, վորոնք են՝ հեռադիտակները, կատարելագործված յերկդիտակները (բինոկլները), շրջադիտակները (պերիսկոպները), դիտակայմերը և պարանավոր (գետնից կապած) ոդապարիկները, ոդային տորմիղը, վոր մեծ արագությամբ իմանում է և ավերում այն բոլորը, ինչ տեսնում է։

Ոդային լուսանկարչությունը հայտաբերում է վոչ միայն ճանապարհն ու կածանները, այլև այն տրորած խոտը, վորի վրայով անցած կլինեն թեկուզ մի քանի մարդիկ։ Անհաջող քողարկում կատարած ժամանակ կարելի կլինի վորոշել մի տեղ տնկած ճյուղերը կամ քողարկելու համար փռած կտավը, վոր ներկված է տեղի գույնին, ինչպես որինակ. հասած կամ դեղին, հացադաշտի գույնի և այլն։ Ոդային տորմիղը ներկայումս ունի զրահապատ սավառնակներ, վորոնք սպառազինված են 30 գնդացիրով։ Այդպիսի մի սավառնակ անտառի հեռուից կարող է հանկարծ դուրս գալ ճանապարհով անցնող զորասյունի գլխավերևը և իր 30 գնդացիրների սփռված կրակով վոչնչացնել նրան ամբողջովին։

Կան ռմբաձիգ սավառնակներ, վորոնք զինավորված են 120 վիթանոց ֆուգասային ռումբերով. նրանք առաջ են բերում արտասովոր

ավերում։ Այս սավառնակները կարող են անըսպասելի կերպով, արագորեն հայտնվել թիկունքում և իրանց ֆուգասային ու հրձիգ ռումբերով վոչնչացնել ամեն ինչ և ճակատը թողնել առանց ռազմամթերքի և պարենի։

Այս բոլորից պարզ է, թե ինչպիսի հսկայական նշանակություն պետք է ստանա քողարկումի տեխնիկան, վոչ միայն դիրքերում ու յերթի ժամանակ, այլև խորը թիկունքում։

ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բնությունը կենդանական աշխարհին տվել է ամենաբազմատեսակ քողարկում։ Բնությունը հոգ է տարել միջատներին, սողուններին, թռչուններին ու կենդանիներին հագցներու այնպես, վոր նրանք այդ քողարկումով կարողանան աննկատելի մնալ իրանց թշնամիներից և աննկատելի մոտենան իրանց զոհին։

Հիշենք թիթեռներին և բզեզներին, վորոնք այնպիսի գույներ ունեն, վոր նրանց չի կարելի զանազանել, այն բույսերի գույնից, վորոնց վրա նրանք գտնվում են։ Թռչունները ծածկված են իրանց ապրելու տեղի գույնին համապատասխան փետուրներով. կենդանիները ծածկված են իրանց ապրած տեղին համապատասխան գույնի բրդով։ Հիշեցեք նապաստակը, վորը ձմեռը ընդունում է սպիտակ, իսկ ամառը՝ դորշ գույն. հյուսիսային յերկրների սպիտակ արջը և յերկրագնդի միջին գոտու սրճագույն արջը, խայտաբղետ, շերտավոր վագրը, բորենին և վագերաձին արևադարձային յերկրներում, վորտեղ բնությունն աչքի յե ընկնում իր ակընհայտնի խայտաբղետությամբ և բույսերի թերթերի բազմագունյան ներկերով։ Ամենից ապշեցուցիչ արարածը վոր կա, բնական քողարկման տեսակետից, դա քամելիոնն է. նա իր կաշու գույնը փոխում է այն մակերևույթի գույնին համեմատ, վորի վրա սողում է։

ՄԱՐԴՈՒ ՔԱՂԱՐԿՈՒՄԸ

Յերկրի վրա ապրող մյուս արարածների հետ համեմատած մարդը, չնայած ունի մեծհանճարեղ բանականություն և բարձր զարգացում, այնուամենայնիվ ոժտված չե բնական

քողարկությամբ։ Ընդհակառակը. մարդը ունի գետնի վրա դիտելու հարմար պատկեր, մանավանդ կանգնած դրությամբ, և բնորոշ մարմնի ձև և գլխի, ուսերի ու ձեռքերի համաչափություն ու բնորոշ գծագրություն. ուստի նա պետք է իրեն թշնամուց աննկատելի մնալու կամ նրան մոտենալու համար ինքը հնարի իրեն հարմար քողարկում։

Մարդը նախնական ժամանակներից սկսած գոյության կռվում ոգտվել է մինչև այժմ էլ՝ գոյություն ունեցող քողարկումի միջոցներով։ Նա մոտենում եր թշնամուն կամ նրանից թաքնվում եր, ոգտվելով տեղանքի խորդուբորտությունից, տեղական առարկաներից, որ. թփերից քարերից, անտառներից, ոգտագործում եր որվա ժամանակը և յեղանակը (գիշեր, քամի, առավոտ, մառախուղ, անձրև) և այլն։

Ներկայումս թշնամու վրա հարձակվելու ժամանակ և դիրքերում նրա հետ ունեցած կռվի մեջ անհրաժեշտ է, լայն կերպով կիրառել քողարկումը։ Այժմս չափազանց ուժեղ են հարվածելու, ավերելու և դիտողության միջոցները.

նրանք անհնարին են դարձնում մարդու մարտում բաց-բաց մնալը կամ նույնիսկ ժամանակավորապես շինած տեխնիքական թաքստոցներում. այս թաքստոցները անարգել կարելի յե ավերել հրետանիով և սավառնակի ռումբերով. իսկ թաքստոցները այնպես շինել, որ չքանդվեն, այդ հնարավոր չէ, ժամանակի սղության և ռազմական գործողության դաշտում համապատասխան նյութերի բացակայության պատճառով։

Վերոհիշյալ հանգամանքներն են, որ հարկադրեցին վերջին իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների մեջ լայնորեն գործադրել քողարկումը, որը այժմս զարգացել և դարձել է ռազմական գիտությունների գլխավոր ճյուղերից մեկը։

Քողարկումի խնդիրն է հակառակորդից թաքցնել կենդանի ուժը, նրա գործողությունները, ռազմական կառուցվածքները, զանազան ռազմական գույքերը և այլն. քողարկումը նպատակ ունի հակառակորդի բոլոր տեսակի հետախուզությունը դժվարացնել. ուստի պետք է նրանից

թաքցնել իր մտադրությունները և նրան շփոթության մեջ ձգել, թե իրական և թե առաջիկա պարագաների մասին։

Այդ բանին կարելի է հասնել երկու ձևով.

1. Քողարկումը հակառակորդից թաքցնում է այն, ինչ վոր մեզ մոտ կա, կամ այն, ինչ վոր իրապես կատարվում է։

2. Նա հակառակորդին խաբեության մեջ է ձգում նրանով, վոր ցույց է տալիս զանազան կեղծ առարկաներ, կամ իսկականին նման նշաններ և այդպիսով մոլորության մեջ է ձգում հակառակորդին, կամ վանում է նրա ուշադրությունը։

Այդ պահառով Քողարկումի եյական սկզբունքը թաքնվելն ու խաբելն է։ Ամեն մի անսպասելի բան կարող է ջլատել հակառակորդի բարոյական ուժերը և այդպիսով արագացնել նրա պարտությունը, միևնույն ժամանակ էլ, անվընաս կմնան մեր կառուցվածքներն ու մեր կենդանի ուժը։

Ամբողջ քողարկումը կարելի է բաժանել երկու գլխավոր բաժինների.

Ա. Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI. 1922
Ереван, Мясницкая
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
11982

I ԲՆԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ.

II ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ.

Ամեն տեսակ քողարկումից պահանջվում է.

1) Բնականություն.

2) Ակտիվություն և

3) անընդհատություն.

Քողարկումի բնականության պահանջը բղխում է այն անհրաժեշտությունից, վոր բոլոր կառուցվածքները բնության մեջ գոյություն ունեցող բնական առակների նմանությամբ լինեն և միակերպվելով տեղանքին, թշնամու մեջ կասկած չհարուցեն մեր զորքի գտնված տեղի մասին։

Քողարկումի ակտիվությունը պահանջում է՝ վոչ միայն թաքնվել կամ առհասարակ թշնամուն խաբել, այլև այդ երկու քողարկումի հիմնական միջոցները այնպես համաձայնեցնել իրար հետ, վոր հակառակորդը գիտակցորեն ներշնչվի վորոշ պատկերացումով։

Միտք չունի ամբողջ դաշտը ուշադրությամբ քողարկել, վորովհետև միևնույն է, հա-

կառակորդը դրան չի հավատա. պետք է մի տեղ քողարկել, իսկ մյուս տեղերում ցույց տալ, թեև կեղծ, բայց բնականին շատ մոտիկ մի դրություն. ինչպես օրինակ. կեղծ խրամատներ շինելը, փոքր ու կեղծ խարույկներ վառելը, արձակումը, մարդկանց շարժումը և այլն։

Մի խոսքով, քողարկության ակտիվությունը այն է, որ հակառակորդին ստիպի, իր ուշադրությունը կենտրոնացնելու գլխավորապես մեր կեղծ կառուցվածքների վրա և թուլացնի նրա հսկողությունը գոյություն ունեցող իսկական պարագայի վրա։

Քողարկության անրնդհատությունը։ Զորքի դիրքերում գտնվելն ու այդ գտնվելու տևողությունը ժամանում է արդեն քողարկված դիրքը՝ գնալ-գալու հետևանքով կածաններ գոյանալու, ծխի յերևալու, զորքի շարժվելու և այլ պատճառներով։ Դրա համար անհրաժեշտ է, շարունակ ժանրագնորեն հետևել և վերացնել այդ պատճառները։

Բացի դրանից շարունակ ուղղել քողարկումի փչացած տեղերը, ինչպես օրինակ. փոխել քողարկելու համար խցկած դեղնած ճյուղերը կամ քողարկելու համար ծածկած ճիմերը։ Պետք է բաց արած կածաններին ավելացնել կեղծ կածաններ, ցույց տալ զորքի շարժման համար տեղեր։

Զորամասերի առաջխաղացման ժամանակ պետք է նրանց քողարկել և վանել հակառակորդի ուշադրությունը։ Տեղափոխության ժամանակ, պետք է անհնարելի դարձնել զորքին դիրքերից հանելը և նրա շարժումը դեպի յերկաթուղու կայարանները։

Այս բոլոր նպատակներին լիովին չի կարելի հասնել քողարկումի համար գոյություն ունեցող միջոցներով։ Կառուցվածքների կառուցումն ու քողարկումը համարյա միաժամանակ պետք է կատարել. սխալ կլիներ, յեթե մի գիշերվա մեջ մեծ կառուցվածքներ կառուցվեն միանգամից և այդպիսով թշնամու ուշադրությունը դարձնեն նրա վրա։

1. ԲՆԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ լինում է.

1) Զորաշարժ,

2) Զորական միմիկրիա,

3) Տեղանքին հարմարվելը,

4) Բնական պայմանների ոգտագործում և

5) Ռազմական գաղտնիքը պահպանելու միջոցները։

II. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ լինում է.

1) Պատկերավոր-շինարարական. ա) դուռնա-քողարկում, բ) կամուֆլաժ, գ) դաշտային դեկորացիա, դ) սկուլպտա-քողարկում։

2) Բույսերով քողարկում,

3) Հրա—քիմիական քողարկում և

4) Ռազմական գրիմ։

Այս պրակը մենք նվիրում ենք բնական քողարկումին, որի միջոցների հետ պետք է ծանոթ լինի ամեն մի հետևակ, հրետավոր և հեծելակ, և բոլոր նրանք, ովքեր կապ ունեն ռազմական գործողությունների հետ (զորքերի ուղարկելն ու վագոններում նստեցնելը, ռազմամթերքը ու պարենի պաշարը ուղարկելը և այլն)։

ԿԵՆԴԱՆԻ ՈՒԺԻ ԲՆԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ

ԶՈՐԱՇԱՐԺ

Կենդանի ուժի քողարկումը կայանում է գլխավորապես զանազան ռազմավարական և ռազմագիտական զորաշարժերի մեջ, որոնք կատարվում են մեր իսկական գործողությունները հակառակորդից թաքցնելու համար։ Ուժեղացրած հետախուզությունները և ցույցերը (դեմոնստրացիաները),—յերկրորդական ուղղությունների վրա գրոհները—այլև դարանները, թշնամուն հետապնդման մեջ քաշելը (նախամտածված նահանջը) և այլն, խաբեության մեջ են ձգում հակառակորդին, իսկական պարագաների և ուղղության նկատմամբ։

Քողարկության գաղափարը այստեղ մտնում է գործողությունների դիտավորության մեջ և չի կարելի վորոշակի ցուցումներ տալ, թե ինչպես պետք է կատարել նման զորաշարժերը։

Պետք է հիշել միայն, որ խաբեությունը այն ժամանակ է միայն ոգտակար մարտական նպա-

տակի համար, յերբ այդ հավանական է յեվ ռազմավարական-տեսակետից հիշտ է կատարված։

Այս տեսակի քողարկումի մեջ պետք է դնել խորամանկության բոլոր միջոցները. ինչպես օրինակ. անսպասելի հարձակում գործելը խաղաղ բնակիչների կամ հակառակորդի դիմակի տակ, գիշերային հարձակումները և այլն)։

ՄԻՄԻԿՐԻԱ

Ինչպես վոր ասացի, մարդու կերպարանքը, մանավանդ ամբողջ հասակով, իր գլխի, ուսերի, յերկու վոտքի վրա կանգնած ժամանակ իրանի բնորոշ բնագծերով, պարզ նկատելի յե նույնիսկ հեռու տարածության վրա։

Այդ պատճառով եվ մարդը հակառակորդին մոտենալիս կամ նրանից թաքնվելիս, պետք է ձեվափոխի իր հանդերձը և մարմնի ձեվը այնպես, վոր միակերպվի տեղանքի հետ և տեղան-

*) Տես «Քողարկություն» Սկլյարովի և Ցեվգակիմովի։

քի շրջապատող առարկաներից քիչ տարբերվի։ Այսպես օրինակ. յեթե հետախույզը գորշ գույնի վարագանակ հագած գտնվում է մարգագետնի վրա, վորտեղ այնպիսի տեղական առարկաներ չկան, վորոնց հետևում նա կարողանա թաքնվել, միաժամանակ անհրաժեշտ է, վոր նա հսկի հակառակորդին, այն ժամանակ նա կարող է վորևե դիրք ընդունել (կուչ գալ, կծկվել և այլն) այնպես, վոր մարդկային կերպարանքի նմանությունը կորչի։ Այն ժամանակ հետախույզը ավելի շուտ կհիշեցնի վորևե տեղական առարկա. քար, քոթուկ, ցախի կապուկ, մերկ գետնի մի կետ և այլն։

Նստելը, պպզելը, չոքեչոք անելը, ձեռքերն ու վոտքերը կծկելը, հանդերձը հագնելու ձևի փոխելը (օրինակ վարագանակը գլխին գցելով մի թեը հագնելը ու ձեռքը վեր բարձրացնելը, իրան ճյուղերով քողարկելը, (յեթե տեղանքում կան թփեր, հագցնելով մեկը գլխին, յերկուսը՝ գոտուն կոխելն ու մեկը ձեռքին բռնելը և այլն). այս բոլորը,—վոր մեծ աջողությամբ գործադրվում եյին 21-րդ դպրոցի ամարային պա-

բակտերիաների ժամանակ,—կազմում են մարդու համար միմիկրիայի միջոցները։

Մարմնի կեցվածքների և կերպարանափոխությունների ընտրություն անելիս պետք է կարևորություն տալ այնպիսիներին, որոնք չեն հոգնեցնում։

Հակառակորդի ոգային հետախուզության ժամանակ, իբրև միմիկրիայի միջոցներ կարող են լինել հեռակայները. մենակ մարդիկ պետք է նստեն կամ պառկեն կծկված ձևով, խմբով յուրաքանչյուր ժամանակ պիտի զանազան կողմեր ցվրվեն կամ իրար գլխի հավաքվելով, կիպ կպչեն իրար և զանազան ձևափոխություն ընդունեն,—նստած, պառկած և կանգնած այնպես, որ սավառնորդը չեթե լինի 2 կիլոմետր (1 վ. և 438 սաժ.) բարձրության վրա, և մի ժամում թռչի 240 (225 վ.) կիլոմետր արագությամբ, ընդունի նրանց իբրև ցախի կույտ, բարդ, հողաթումբ և այլն։ Խմբի մարդիկը կարող են և պառկել իծաշարուկ, ծուռ ու մուռ գծով, որ սավառնորդի վրա շավիղի տպավորություն կթողնի։ Յեթե տեղանքը հարմարություն ունի, կարելի է թաք

կենալ թփերի մեջ, կանգնել ծառերի և տների շվաքում։ Հեծելակները պետք է իջնեն և պառկեցնեն ձիերին, կամ իջնելով, իրանք պիտի տեղավորվեն ձիերի շվաքում։ Յեթե հրետանին ճանապարհով գնում է, վորպեսզի սավառնորդը այն տպավորությունը ստանա, թե յերկաթի սայլերի գումակ է, պետք է լուծը և հրանոթը մեկուսի ծածկել բրեզենտներով, զորդ—քողարկով և այլ առարկաներով։

Զորասյուները կարելի յի ձգել կամ խտացնել յերկարությամբ, վորպեսզի հակառակորդի վրա ուժերի շատ կամ քիչ քանակի տպավորություն թողնի։

Հետևակորը թանձր փոշի բարձրացնելով կարող է հակառակորդին իրան ընդունել տալ հեծելազորի տեղ, կամ իրա քանակի նկատմամբ հակառակորդին մոլորության մեջ ձգել. յետ դառնալով կարող է շարժման ուղղության մասին սխալ դաղափար տալ։

ՏԵՂԱՆՔԻՆ ՀԱՐՄԱՐՎԵԼԸ

Տեղանքին հարմարվելը նրանումն է, թե ինչպես պետք է ոգտագործել տեղանքի վանական

ընական պաշտպանիչ հատկությունները, որ լինում են.

ա) Ռելյեֆա—պատսպանական (ծալքեր).

բ) Գունա—պատսպանական (գունավորում).

գ) Սվերա—պատսպանական.

դ) Տեսարանա—պատսպանական և

յե) Ուրվա ժամանակից, արեվի դրությունից յեվ յեղանաղից կախում ունեցող—պատսպանական հատկություններ։

Ա. ՌԵԼՅԵՖԱ—ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաշտպանության համար ամենից լավ հատկություններով աժված կարող է լինել ավելի շատ դարուվոս ունեցող տեղանքը, որի ծալքերի և կատարների յեռակը զորքը կարող է հակառակորդի վերերկրյա հսկողությունից թաքնվել։ Միայն հարկավոր է հմտություն ունենալ հաշվի առնելու թաքնված առարկայի և կատարի միջև յեղած հեռավորությունը, այլև հակառակորդի հնարավոր զիտակետերի հեռավորությունն ու բարձրությունը։

Քարտեզով տեղամասերի ընտրության ժամանակ կարելի յե առաջուց գծագրել հակառակորդի զանազան զիտակետերից «անհասանելի տարածությունները»։

Հրետանային զիրքերը թաքցնելու համար, տեղանքի մակերևույթի ռելյեֆը ոգտագործելիս, պետք է մի ուղղում մտցնել բռնկումի համեմատ (գծային հրանոթի համար մոտ 2 սաժ. դաշտային հոբիցի համար 3 սաժ., ավելի լայն ներսի տրամաչափ (կալիբր) ունեցողների համար՝ ավելի)։

Այն զիրքերը, որոնք կատարելապես թաքցրնում են հրետանին, նրա գործողության միջոցին, այսինքն. յերբ թույլ չեն տալիս պայթյունը տեսնել), կոչվում են՝ ծածկված։ բայց յերբ հրետանին ծածկված է, իսկ պայթյունը վոչ, կոչվում են՝ կիսածածկ։

Ռելյեֆա—պաշտպանական հատկությունների ոգտագործումը ամենամեծ նշանակությունն ունի վերերկրյա զիտողության դեմ. ոդային զիտողությունից նա չի պաշտպանում։

Բ. ԳՈՒՆԱ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Տեղանքի գունա-պաշտպանական հատկութիւնները պետք է ոգտագործել մարտիկների այնպիսի տեղավորումով, որ նոցա գտնված տեղի գույնը համապատասխանի նրանց հագուստի գույնին (կամ սայլերի և ուրիշ շարժական միջոցների գունավորումին)։

Մեղանում ընդունված հանդերձի պաշտպանական գույնը լավ տեսանելի է մութ-մոխրագույն ֆոնի վրա և յեթե փթերի առաջ կանգնես՝ շատ քիչ նկատելի է։ Վորքան տեղանքը խայտաբղետ է իր գույներով և վորքան շատ են նրա վրայի տեղական մանր առարկաները (թփեր, առանձին քար, կոշտեր և այլն), այնքան այդ տեղանքը ավելի լավ է պաշտպանում մարտիկին, թեկուզ նա գույնով առարկաներից վոչ մեկին էլ նման չլինի։

Ընդհակառակը, միագույն տեղանքի վրա սմեն առարկա աչքի է ընկնում։

Տեղանքի գունա-պաշտպանական հատկութիւնները մեծ դեր են խաղում վերերկրյա դիտողության դեմ և առավել ևս ոդայինի դեմ։

Ոդային հետախուզությունից կարելի է լավ ծածկվել այն ժամանակ, յերբ շարժումը կատարվում է ճանապարհների կողքերով, կորդերով և խուսափել ճանապարհի յերեսով գնալուց։ Առհասարակ վերևից դիտելու և ապարատով լուսանկարելու համար գույները դժվար են տարբերվում։ Միայն սեվ, սպիտակ, կանաչ յեվ կարմիր գույներն են, վոր տալիս են կատարյալ պարզ տպավորություն. որինակ՝ յեթե ցանկանում ենք ոդա—լուսանկարումից թաքցնել դետի վրա շինած կամուրջը կամ ճանապարհի մի մասը, բավական է ջուր ցանել նրանց վրա և լուսանկարը ջրի գույն կտա, վորը նկարի մեջ դուրս է գալիս մթնագույն։

Գ. ՍՏՎԵՐԱ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Արևի, լուսնի, լուսարձակի, հրթիռի և այլն լուսավորելու ժամանակ առարկաներից ընկած սվերը հաճախ ծառայում է իբրև լավ միջոց հակառակորդի աչքից թաքնվելու համար։ Իսկ յերբեմն էլ ընդհակառակը. հակառակորդի համար նկատելի է դարձնում տեղանքում յեղած այս կամ այն առարկան։

Արևի պայծառ լուսավորության ժամանակ ծառերի, թփերի, քարափների, շենքերի և այլն տավերում գտնված առարկան, տավերի մոտ յեղած աչքը գրգռող վառ լույսի պատճառով, մինչև անգամ մոտիկ տարածության վրա, քիչ նըկատելի յե դառնում, մանավանդ յեթե առարկան անշարժ է։

Հակառակորդին մոտենալիս կամ տեղում նրանից թաքնվելիս պետք է կարողանալ լայն կերպով ոգտագործել տավերները։ Առանձնապես լավ թաքնված կլինի առարկան, յեթե տավերում, վորի մեջ նա գտնվում է, աչքի յեն ընկնում խիստ լուսավորված կետեր. ինչպես որինակ. անտառի ծայրում, վորտեղ ծառերը նոսր են. միայն պետք է հիշել, վոր արևի և լուսնի լուսավորելուց առարկայից ընկած տավերը իր մեծությունն ու դիրքը փոխում է և դրա համար յերկար մնալը տավերում հնարավոր է միայն շարժուն առարկաների համար։

Լուսնի լույսի տավերները ավելի լավ են թաքցնում առարկաները, վորովհետև լուսնի տակ առարկաների գույները քիչ դեր են խաղում և բոլոր առարկաները միատեսակ գույնով

են յերևում։ Լուսարձակի լուսից առարկաների ձգած տավերը այնքան կարճատև է և աչք ծակող, վոր նույնիսկ շատ մոտ տարածության վրա, նրա մեջ ընկած առարկաները անտեսանելի յեն մնում։

Տեղանքի վրա շարժվող առարկաների տավերները, վոչ թե քողարկում են նրանց, այլ նկատելի յեն դարձնում, վորովհետև միաժամանակ յերևվում են թե առարկաները և թե նրանց տավերները։ Բացի դրանից, ոդային հետախուզության և ոգա-լուսանկարումի ժամանակ տավերը հեշտությամբ և ակնհայտնի դարձնում այն առարկաները, վորոնք առանց տավերի կարող եյին աննկատելի մնալ։ Ինչպես որինակ հեռաղրի և հեռախոսի սյուները, ճանապարհի յերկարությամբ բուսած ծառերը, վորոնք իրանց զուգահեռական տավերներով մատնում են ճանապարհի հեռագծերը։

Տավերը կործանիչ է լինում ոգա-լուսանկարումների կարդալու ժամանակ, յերբ քողարկված կառուցվածքների կողքերը վատ են միակերպված գետնի մակերևույթի հետ և տալիս են

աչքի ընկնող ներս ու դուրս ընկած անկյուններ։ Տեսողական դիտողության ժամանակ սովերը կարող է նկատելի դարձնել կեղծ թփերը, ծածկույթ-քողարկը՝ դաշտային դեկորացիաները և այլն։

Դ. ՏԵՍԱՐԱՆԱ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական առարկաները, ինչպես որինակ. անտառները, մացառուտները, ցանքսերը, բնակավայրերի շենքերը, կարող են ծառայել կենդանի ուժի և զույքի համար իրրև ծածկարան։ Սրանց տեսարանա-պաշտպանության աստիճանը վորոշվում է իրենց թվով և հարմարությունով։

Պարզ աչքի ընկնող տեղական առարկաներից, ինչպես որինակ. անտառի ծայրից, առանձին շենքերից և նման առարկաներից, պետք է խուսափել, վորովհետև նրանք կարող են հակառակորդի ուշադրությունն իրենց վրա գրավել և գնդակոծի ժամանակ ծառայել իրրև կողմնորոշ կետեր։

Ե. ՈՐՎԱ ԺԱՄԱՆԱԿԻՑ, ԱՐԵՎԻ ՈՒ ՅԵՂԱՆԱԿԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առավոտյան մշուշը, աղջամուղջը, ագամաժութը թույլ են տալիս շարժում կատարել ավելի անկասելի կերպով, քան ցերեկը։ Գիշերային շարժումը ավելի հնարավորություն է տալիս ծածկվել և հաժարվում է քողարկումի համար տարածված միջոց։

Մառախուղը, ձյունը, կարկուտը, անձրևը, ամպամած յեղանակը, գետնից բարձրացող մեծ քանակությամբ փոշին կամ գոլորշին, նույնպես դժվարացնում են դիտողությունը։

Տեղափոխության համար առանձնապես բարեհաջող ժամանակը՝ գիշերն է։

ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ *)

Խրամատները և ուրիշ պաշտպանողական կառուցվածքները տեղանքին հարմարեցնելու ժա-

*) Տես «Քողարկումի վերաբերյալ ժողովածու».

մանակ՝ պետք է շարունակ աչքի առաջ ունենալ բնականության պահանջները, որպեսզի այս կառուցվածքները ամենալավ կերպով միակերպվեն շրջապատող տեղանքի հետ և նրա վրա վոչ մի բանով նկատելի չլինեն։

Քննենք ժանրաժամանորեն, թե ինչպես պետք է ոգտագործել տեղանքի բնական հատկությունները, տեղ ընտրելու և խրամատներ շինելու ժամանակ։

ՏԵՂԱՆՔԻ ՌԵԼՅԵՖԱ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Հարթ տեղանքի վրա խրամատներ շինելիս պետք է հողապատնեշը թեքացնել, որ գետնից դիտողի աչքին քիչ նկատելի լինի։ Հողապատնեշը պետք է հնարավոր չափով անել պակաս գագիվայր, որ և թույլ է տալիս նրան միակերպվել տեղանքի մակերեսի հետ, նույնպես և պակասեցնում է ստվերը, որ եյական կարևորություն ունի ոդային դիտողության և ոդա-լուսանկարումի ժամանակ. յետևի կողաթումբը պետք է հողապատնեշից բարձր չանել։

խրամատի փոսը, որքան հնար է, ավելի նեղ անել։

Վերևից դիտելու ժամանակ խրամատի փոսի մեջ ստվերը միշտ տեսանելի կլինի, նույնպես և տեսանելի կլինեն մասամբ հողապատնեշի և յետևի կողաթմբի լանջերը։

բ) Բարձրությունների վրա խրամատներ շինելիս կարող են հետեվյալ դեպքերը լինել. խրամատը կարելի յե շինել տեղագրական կատարի վրա (սարի բեկման ամենաբարձր կետը). բայց այդ դեպքում յերկնքի լուսավոր ֆոնի վրա խրամատը նկատելի կլինի և այդպիսի տեղի ընտրությունը հնարավոր է միայն այն ժամանակ, յերբոր խրամատի հետևում անտառ կամ մացառուտ կլինի, դեպի վորը և խրամատը կձգվի և այդպիսով էլ աննկատելի կմնա։

Կարելի յե խրամատը տեղագրական կատարից մի քիչ իջեցնել դեպի հակառակորդի կողմը. դրանով կբողարկվի, նույնիսկ հակառակորդի բարձր կետերից դիտելու ժամանակ միայն հարկավոր է յետևի կողաթումբը մի քիչ

հողապատնեշից ցած անել։ Այսպիսի խրամատի վրա փորձնական հրաձգություն կատարելը դժվար է, վորովհետև թշնամին կարող է դիտել միայն տեղ չհասած գնդակների ընկնելը, իսկ գլխի վրայով անցածները կընկնեն բարձունքի յետևը։

Մի քանի դեպքերում զիմադրության գլխավոր գծի խրամատները կարելի յե շինել հակառակ լանջերի վրա այն պայմանով, վոր նրանք մինչև կատարը ունենան լավ գնդակոծի բավականին հարմարություն։ Այսպիսի տեղավորումով բոլորովին աննկատելի յե դառնում, թե խրամատը, թե թիկունքից խրամատին մոտենալը (վոր անհնար է առջևի լանջերի վրա շինած ժամանակ), և թե հակառակորդի կողմից նրա վրա փորձնական հրաձգություն կատարելը։

Խրամատը տեղագրական կատարից շատ ցած բերելը և շինելը, այսպես կոչված ռազմական կամ մարտական կատարի վրա (լանջերի վրայի այն գիծը, վորտեղից լանջերը 400-600 քայլից մինչև ստորոտը, յենթակա յեն գնդակոծման, առանց մեռյալ տարածությունների),

ձեռնտու չե, վորովհետև խրամատի յետևի կողաթումբը և փոսի յետևի լանջը կարող են նրկատելի դառնալ և նկատելի դարձնել խրամատը։ բացի դրանից դժվարանում է թիկունքի հետ հաղորդակցությունը և հակառակորդի խրամատի վրա փորձնական հրաձգություն կատարելը շատ լավ հետևանք է ունենում, վորովհետև տեղ չըհասած և գլխի վրայով անցած գնդակները փոշի յեն բարձրացնում և տեսանելի յեն դառնում։

Խրամատները լանջերի ստորոտը իջեցնելը ավելի ևս ձեռնտու չե. այդ կարելի յե ընդունել միայն այն ժամանակ, յերբ խրամատը լավ կքողարկվի և այն էլ բացառիկ դեպքերում։

Տեղանքի ռելյեֆա-պաշտպանական հատկությունները ոգտագործելով, մենք կարող ենք չափազանց աջող կերպով թաքնվել վերերկրյա դիտողությունից։ Ոդային դիտողությունից մենք թաքնվում ենք ժամանակի կերպով և յեթե արհեստական բողարկումը չկիրառենք, այն ժամանակ փոսերի միջև, ինչպես և հողապատնեշի ուղղորդաձև լանջերից ու յետևի կողաթմբից ընկած ստվերները վերևից տեսանելի կլինեն։

ՏԵՂԱՆՔԻ ԳՈՒՆԱ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խրամատների տեղը ընտրելու և շինելու ժամանակ տեղանքի գունա-պաշտպանական հատկությունները ավելի լավ ոգտագործելու համար անհրաժեշտ է պահպանել հետևյալը.

1. Խրամատը շինել առավելապես լավ գունա-պաշտպանական տեղերում. այսինքն, վորտեղ կան զանազան գույների շատ առարկաներ. ինչպես որինակ. թփեր, թումբեր, խրամներ, մերկացած տեղեր, փլվածքներ և այլն. այս հանգամանքից խրամատը այնքան աչքի ընկնող չի լինի և դա հնարավորություն կտա վառ գույներով կետերից խուսափելու, վորոնք կարող են հակառակորդի համար, փորձնական հրաձգություն կատարելիս, իբրև կողմնորոշ կետեր ծառայել:

2. Խրամատը փորելու ժամանակ հողի վերևի շերտը, վոր ավելի մութ է ուստի և մակերևույթի վրա քիչ նկատելի, պետք է կիտել մի քանի տեղ խրամատի յեռևում. խրամատը փորել վերջացնելուց հետո պետք է նրանով

ծածկել ներքևի շերտերից հանած հողի յերեսը, վորը սովորաբար հողի վերին շերտերից ավելի բաց գույն է ունենում:

Բացի դրանից, հողի վերին շերտի մեջ մնացած խոտի արմատները և սերմերը կսկսեն ծլել, մանավանդ անձրևային որերին, և յեթե խրամատներով հարկավոր է մի քանի որ ոգտվել, խրամատը բնականաբար կքողարկվի:

Տեղանքի գունա-պաշտպանական հատկությունների ոգտագործումը խրամատին հնարավորություն է տալիս պաշտպանվելու առավելապես գետնի վրայի դիտողությունից, բայց և մասնավորապես նվազեցնում է խրամատի նկատելի լինելը ոդային հետախուզության միջոցին:

ՏԵՂԱՆՔԻ ՏԵՍԱՐԱՆԱ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խրամատի համար տեղանքի տեսարանա-պաշտպանական հատկությունից կարելի յե ոգտվել խրամատը տեղավորելով թփերի, անտառի (փորձնական հրաձգությունը հեշտացնող ծայրից դեպի խորքը տանելով), բարձր խոտեմեջ և այլն:

Խրամատի հենց գծելու ժամանակ պետք է խուսափել ուղիղ գծերից, անկյուններից, սուր-սուր բեկվածքներից և խրամատի ուղղությունը հարմարեցնել տեղանքի հետ. խրամատի աչքի ընկնող տեղերը (գնդացիրային բները, դիտակետերը, պատսպարանները, խրամուղիները, արգելքները) պետք է տեղավորել այնպես, որ նրան խրամատի հետ արտաքին (տեսարանային) կապ քիչ ունենան. պետք է խույս տալ ակընհայտնի աչքի ընկնող տեղական առարկաներից (առանձին բլուրներից, առանձին ծառերից, այուներից, քարերից և այլն), որպեսզի նոքա փորձնական հրաձգության համար չծառայեն իբրև կողմորոշ կետեր։ Մյուս կողմից լայն կերպով պետք է ոգտագործել տեղական այսպիսի առարկաները, ինչպես որինակ. դարափրլերը, անտառները, հրանոթի գնդիքից առաջացած փոսերը և այլն։

Տեղանքի ստվերա-պաշտպանական հատկությունները մշտական կառուցվածքների համար իբրև թաքստոցներ նշանակություն չունեն։ Խրամատների վերաբերյալ բոլոր ասածները ընդունելի են և ռազմական մնացած բոլոր կառուցվածքների համար, ինչպես են՝ լարացանցերը և ուրիշ արգելքները, պատսպարանները, խրամուղիները, գնդացիրային բները, դիտակետերը և այլն, նույնպես և այն նյութերի վերաբերյալ, որոնք հատկացվում են կառուցվածքների համար։

Վերջինները, եթե մեզ առանց քողարկման, կարող են ծառայել իբրև միջոց մեր կարևոր կառուցվածքների տեղը որոշելու։

Լավ քողարկված խրամատը կամ արգելքը հակառակորդի համար անսպասելիություն է, որի վրա և հաճախ հիմնվում է մարտական աջողությունը. այդ աջողության մի նշանավոր մասը կարելի է վերագրել և քողարկումի մատուցած ծառայությանը։

Սակայն ինչքան էլ որ կարևոր լինի խրամատների քողարկումը, այնուամենայնիվ տեղ ընտրելու ժամանակ ամենից առաջ պետք է առաջնորդվել դիրքի մարտական պահանջներով, որ են՝ տեղի լավ տեսածիր և գնդակոծի հարմարություն ունենալը և հետո ոգտվել քողարկումից, հնարավորության ամենալայն չափով։

ՔՈՂԱՐԿՈՒՄԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կառուցվածքների համար տեղանքում յեղած միջոցները ոգտագործելուց հետո՝ քողարկումը ավելի լիակատար դարձնելու համար, անհրաժեշտ է նրան լրացնել ակտիվությամբ։

Այս ակտիվությունը կայանում է հակառակորդի համար զանազան տեսակի կեղծ պատկերացումներ ստեղծելու մեջ, և այս կարելի չէ ունենալ առանց վորևե աշխատանք թափելու։ Քողարկումի ակտիվ միջոցներից ամենահասարակները հետևյալներն են.

1) Մարդկանց և կենդանիների խրտվիլակները.

2) կեղծ հրանոթները, սայլերը.

3) կեղծ խրամատները, ճանապարհները, կածանները.

4) Հրաձգություն պատկերացնող բռնկումները և

5) կեղծ խարույկները, կեղծ շարժումները և այլն։

Այս բոլորը պետք է նպատակ ունենա խաբել հակառակորդին, խանգարել նրան նկատելու մեր իսկական ծածկված ուժերը և կառուցվածքները։

Կեղծ կառուցվածքները տեղավորելիս անհրաժեշտ է.

1) Տեղավորել նրանց այնպիսի վայրերում, վորոնք նրանց համար բնական են և իսկականին նման։

2) Կեղծ կառուցվածքների համախմբումը պետք է ցույց տա վորոշ ռազմավարական դիտավորություն. վորևե տեղ սահման կամ թև պաշտպանելու մտադրություն և այլն։

3) Կեղծ կառուցվածքները, վորպեսզի այնպես յերևա թե իրանց մեջ պահած ունեն կենդանի ուժ, պետք է այդ բանի համար ունենան բոլոր մանրամասնությունները և նշանները (բռնկումները, խրտվիլակները և այլն)։

4) Կեղծ կառուցվածքների տեղը իսկականների տեղին մոտիկ չպետք է լինի, վորպեսզի նրանց գնդակոծելու ժամանակ իսկականները չհարվածվեն։

5) Կեղծ կառուցվածքները չպիտի նկատելի

դարձնել. կեղծ կառուցվածքները նույնպես պետք է քողարկել, բայց այնպես, որ հակառակորդը նրանց գտնի, իսկ՝ քողարկումը նրան (հակառակորդին) այն համոզման մեջ հաստատի, թե ինքը գործ ունի իսկական կառուցվածքների հետ։

ՔՈՂԱՐԿՈՒՄԻ ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Քողարկումը կատարելապես անընդհատ դարձնելու համար չի կարելի սահմանափակվել միայն նրան մի որևէ վայրում կամ ռազմական գործողությունների մի որոշ շրջանի համար գործադրելով։

Անհրաժեշտ է, որ 1) Քողարկումը մարտական գործողությունների և ունեցած ուժերի համաձայն բոնի որոշ շրջան, որի ընթացքում պետք է տարվի քողարկման բոլոր աշխատանքների և ձևերի միասնական, ղեկավարող ծրագիր (պլան)։

Առաջավոր խրամատը քողարկելով, թիկունքը չի կարելի անուշադրության մատնել. մարտկոցը քողարկելով, չի կարելի առանց քողարկումի թողնել դեպի նա մոտեցող ճանապարհը և այլն,

2) Քողարկումի որևէ ձևը ոգտակործելով կամ որոշ աշխատանք թափելով, անհրաժեշտ է անընդհատ շարունակել այն. շոկել, և արդեն մի անգամ ձեռք բերածը կատարելագործել։

Հակառակ պարագային զորքի կյանքը (շարժումը, խարույկները, կածանները, կերակուր յեփելը և այլն), կարող է մատնել թաքցրածը. այն ել չպետք է մոռանալ, որ ժամանակակից հետախուզությունը հաճախ հիմնվում է ուշադրությունից յերբեմն սպրդնող ամենաչնչին մանր բաների վրա։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ ՊԱՀՊԱՆԵԼԸ

Նկատենք և Ռազմական գաղտնիքը պահպանելու միջոցները։ Թշնամու հողի վրա զորաշարժական պատերազմի պարագաներում, այլև գրաված տեղամասերի շրջաններում, տեղական բնակիչները կարող են հարաբերության մեջ մտնել հակառակորդի զորքերի հետ և գանազան ազդանշաններով նրանց տեղեկություններ տալ. որինակ խարույկներով, հրդեհներով, *)

Գաղտնություն. Ռուս-Ցապոնական պատերազմի

կտրներին դրված նշաններով, ծխող խողովակներով, խոտի դեզերի թվով ու դասավորումով, հողմաղացի թևերի դրությամբ և այլն։

Այս բոլորին պետք է հետևել, վոչնչացնել նշանները և իր հերթին ստեղծել վորևե ուրիշ կեղծ նշաններ։

Անհրաժեշտ է լարված ուշադրություն ունենալ դեպի կատարվող դեպքերը, հմտություն և ստեղծագործություն, մշտական ծածկամտություն ու խաբեություն։

Ի նկատի ունենալով հակառակորդի գործակալական հետախուզությունը պետք է բոլոր զորական ծառայողներին ներշնչել այն համոզումը, վոր ինչ տեսակի հասարակական տեղերում էլ ուզում են լինեն՝ ծառայության վերաբերյալ խոսակցություն չի կարելի թույլ

Ժամանակ 1904—1905 թվերին, Ռուսական ռազմանավերի եսկադրան Վլադիվոստոկից դուրս գալուն միշտ զուգադիպում էին հրդեհներ չինական թաղում։ Այս իր տեսակի նշանարարություն էր յապոնական ծովային ուժերի համար, վորը կատարում էին յապոնական լրտեսները։

տալ. նույն բանը պետք է պահպանել տեղական բնակիչների նկատմամբ՝ մասնավոր բնակարաններում գետեղված ժամանակ։

Հարկավոր է խուսաբել շտաբների և զորամասերի տեղը ցույց տվող ցուցանակներից, դռների վագոնների վրա զորամասի համարը և ընթանալու ճանապարհի մասին գրելուց։

Վերջապես անհրաժեշտ է հետևել ծառայության վերաբերյալ գրագրությանը, հեռագիրներին, հեռախոսագիրներին, ռադիո-հեռագրին։

Առանձին դեպքերում պետք է կիրառել ծածկագիր, և այն էլ հաճախ փոխել։

Յեվ վերջապես անհրաժեշտ է կրկին անգամ ընդգծել, վոր բնական հողարկումը ամենից պարզն է յեվ ամենից հաճախ է գործադրվում. ռազմական բոլոր գործողություններին ժամանակ հողարկումը ներկայանում է—ինչպես ճակատում, նույնպես յեվ թիկունքում—իբրեվ անհրաժեշտություն. այդ պատճառով ամեն մի հետեվակ, հեծելակ ու հրետավոր պարտավոր է գիտենալ այդ մասին—յեղած տեղեկությունները։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
именна, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱՌԱՅՈՒՑԱԿ

Անտեսանելի տարածություն— Невидимое пространство

Արգելք—Препятствие
Արձակյուն—Выстрел

Բեկվածք—Излом
Բեռնաթափում—Выгрузка
Բեռնավորում—Погрузка
Բնագիծ—Рубеж
Բույսերով քողարկում—Растительная маскировка

Գիշերային հարձակում—Ночное нападение
Գծային հրանոթ—Линейное орудие
Գնդակոծ—Обстрел
Գնդացիրային բուն—Пулеметное гнездо
Դորգ-քողարկ—Маска-ковер
Գործողության դիտավորություն—Замысел операции

Դումակ—Обоз
Գունա-պաշտպանական հատկություն—Цвето-защитное свойство

Դաշտային դեկորացիա—Полевая декорация

Դարան—Засада
Դարափուլ—Обрыв
Դարուփոս տեղանք—Пересеченная местность
Դիմադրության գլխավոր գիծ—Главная линия сопротивления
Դիտակայմ—Перископическая мачта
Դիտակետ—Наблюдательний пункт
Դիրք—Позиция

Զորական ծառայող—Военнослужащий
Զորական միմիկրիա—Войсковая мимикрия
Զորաշարժ—Маневр
Զորաշարժական պատերազմ—Маневренная война
Զորասյուն—Колонна
Զորասյունը խտացնել յերկարությամբ—Сжимать колонну в длину
Զորասյունը ձգել յերկարությամբ—Растягивать колонну в длину
Զորքի իջեցնելը (վագոնից)—Высадка войск
Զորքի նստեցնելը (վագոն)—Посадка войск
Զորքի ուղարկելն—Отправление войск

Թաքստոց—Закрытие

Ժամանակից կախում ունեցող հատկություն—Защитная зависимость от времени

Լայն տրամաչափ—Крупный калибр
Լարացանց—Проволочное заграждение
Լուսարձակ—Прожектор

Խրամատ—Окоп
Խրամուղի—Ход сообщения
Խորը թիկունք—Глубокий тыл

Ծալք—Складка
Ծածկագիր—Шифр
Ծածկված դիրք—Закрытая позиция

Կամուֆլաժ—Камуфляж
Կառուցվածքների քողարկում—Маскировка сооружений
Կատար—Гребень
Կարդալը (ոդա-լուսանկարումի)—Дешифрирование
Կետ—Пункт
Կիսածածկ դիրք—Полузакрытая позиция
Կողմորոշում—Ориентировка

Հարվածելու տեխնիկա—Техника поражения
Հեծելակ—Кавалерист
Հետադիտակ—Подзорная труба
Հետապնդման մեջ քաշելը (թշնամուն)—Вовлечение в преследование (неприятеля)
Հետևակ—Пехотинец

Հետեվազոր—Пехота
Հոբից—Гаубица
Հողապատնեշ—Бруствер
Հողապատնեշի լանջ—Скат бруствера
Հրա-քիմիական քողարկում—Пиро-химическая маскировка
Հրետանի—Артиллерия
Հրետավոր—Артиллерист
Հրթիռ—Ракета
Հրձիգ ռումբ—Зажигательная бомба

Մարտական կատար—Боевой гребень
Մերձեցման վոլորտ (հակառակորդին)—Сфера сближения (с противником)
Մեռյալ տարածություն—Мертвое пространство

Ցետեվի կողաթումբ—Тылный траверс
Ցետեվի լանջ—Задний скат
Ցերանգ (գույնի)—Тон (цвета)
Ցերկդիտակ—Бинокль
Ցերկձի սայլ—Парная повозка

Նախամտածված նահանջ—Преднамеренное отступление

Շրջադիտակ—Перископ

Ոդա-լուսանկարում—Аэро-фотос'емка

Ոդային դիտողություն—Воздушное наблюдение
Ոդային հետախուզություն—Воздушная разведка
Ոդային տորմիղ—Аэрофлот
Ուղղորդ լանջ (հողապատնեշի)-Крутой скат(бруствера)
Պառկել իծաշարուկ—Ложиться гуськом
Պատկերավոր-շինարարական քողարկում—Изобразительно-строительная маскировка
Պատսպարան—Убежище
Պարանավոր (գետնից կապած) ոդապարիկ—Привязной змейковый аэростат
Պարենի պաշար—Продовольственные припасы
Պունկտ—Пункт

Ռադիո-կողմնացույց կայան-Радио-компасная станция
Ռազմական գրիմ—Военный грим
Ռազմական կառուցվածք—Военное сооружение
Ռազմական կատար—Военный гребень
Ռազմագիտական զորաշարժ—Стратегический маневр
Ռազմավարական զորաշարժ—Тактический маневр
Ռելյեֆա-պաշտպանական հատկություն— Рельефо-защитное свойство
Ռմբաձիգ սավառնակ—Бомбометательный аэроплан

Սարի բեկման կետ—Точка перегиба горы
Սկուլպտա-քողարկում—Скульпто-маскировка
Սոսկ մարտիկ—Рядовой боец

Վարսպանակ—Шинель
Վերերկրյա հետախուզություն—Наземная разведка
Վերերկրյա հսկողություն—Наземное наблюдение

Տեխնիքական թաքստոց—Техническое закрытие
Տեղ—Пункт
Տեղամաս—Участок
Տեղագրական կատար—Топографический гребень
Տեղանքին հարմարվելը—Применение к местности
Տեսածիր—Обзор
Տեսարանա-պաշտպանական հատկություն—Видо-защитное свойство
Տեսողական դիտողություն—Визуальное наблюдение
Տրամաչափ—Калибр

Փոս—Ров
Փորձնական հրաձգություն—Пристрелка (по окопу) (*խրամատի վրա*)
Քարափ—Обрыв
Քողարկ—Маска
Քողարկման ակտիվություն—Активность маскировки
Քողարկման խումբ—Маскировочная команда
Քողարկման բնականություն—Естественность маскировки
Քողարկման անընդհատություն—Непрерывность маскировки

Քողարկում (քողարկություն)—Маскировка
Քողարկումի միջոցներ—Приемы маскировки
Քողարկված դիրք—Замаскированная позиция
Ֆուգասային ռումբ—Фугасная бомба

ՀԱՅԿ. ԽՄԲԱԳՐ.-ՀՐԱՏ. ԿՈԼԼԵԳԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Գինը.

1. Եճվալդ, Հրացանա-հրաձգային գործ— փոխ. Գ. Կուբանյան՝ . . . . . 35 կ.

[redacted] . . . . . 20 կ.

3. Գորլովսկի, Բանվոր դասակարգի և Ռ. Կ. Կ. դրոշիջատակ—թարգմ. Լ. Դանիելյան . 40 կ.

4. Կոզլովսկի, Քոզարկում, I մաս . թարգմ. Հ. Ալեքյան . . . . . 20 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է

1. Կոզլովսկի, Քոզարկում II և III մաս.
2. Քաղղեկի հուշատետրը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0211066

41. 470

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.